

**ԱՂՕԹՔԻՆ ՄԷՉ
ՀԱՐԱՏԵՒՈՒԹԻՒՆ**

Քրիստոսի Աւետարանը մեզի կը հաղորդէ այնպիսի դասեր, որոնք մեր բովանդակ կեանքի ուղին կը նշդեն: Մեր առջեւ պարզուող պատկերը պարզ է: Այրի կին մը իր դատի լուծումին համար անընդհատ կը դիմէ դատաւորին, որ կ'անտեսէ պարագան: Բայց այրին կը յարատեւէ իր հետապնդումներուն մէջ: Քրիստոս մատնացոյց կ'ընէ այրին, որ յարատեւ եւ անձանձորոյթ կ'աղօթէ, մինչեւ որ կը գտնէ իր դատին լուծումը:

Կեանքին մէջ յաջողութեան պայմանն է յարատեւութիւնը: Նոյնն է պարագան աղօթքի կեանքին: Աղօթքը պիտի ըլլայ յարատեւ: Մանաւանդ այն մարդիկ, որոնք չունին աղօթքի կեանքին վարժութիւնը, ապա այդպիսիները իրենց մէջ պիտի մշակեն աղօթքի կեանքը յարատեւութեամբ արտասանելով հայրերու աղօթքները, մինչեւ որ արտասանուած աղօթքները դարձնեն իրենց սրտին աղօթքը եւ անոնցմէ կարողանան փառել հոգեւոր սնունդը, ինչպէս մեղուն ծաղիկներէն կը փառէ իր ծծումբը, նեկտարը:

Յիշեցէք ուրեմն Տիրոջ խօսքը. «Յամենայն ժամ յաղօթս կացէք եւ մի՛ ձանձրանայցէք»:

ՊԱՅՏՈՂՈՒԹԻՒՆ

Պահեցողութիւնը մեր բարկութիւնը զսպելն է, հեզութեան ճամբան ընտրելն է, մաքուր եւ ուղիղ սիրտ ունենալն է, մեզմէ վատ մտածումներն ու փափաքները հեռացնելն է, բարեգործութեան կեանք մը ապրիլն է:
(Մեծն Բարսեղ)

ՄԵԾ ՊԱՅՏՈՂՈՒԹԻՒՆ

ԳՍԱՍԻՈՐԻ ԿԻՐԱԿԻ

Մեծ Պահի հինգերորդ Կիրակին կոչուած է Դատաւորի Կիրակի, որովհետեւ Ճաշու Աւետարանի ընթերցումը մեզի կը ներկայացնէ Անիրաւ Դատաւորի եւ Փարիսեցիի ու Մաֆաւորի առակները:

Երկու առակներն ալ աղօթքի մասին են: Առաջինը՝ կը սորվեցնէ մեզի առանց յուսահատելու, յարատեւօրէն աղօթելու հաւատքը, որովհետեւ ամենագութ ու ամենաբարին Աստուած անպայմանօրէն պիտի լսէ մեզ: Իսկ երկրորդը՝ մեզի կը սորվեցնէ, թէ ինչպէ՞ս պետք է աղօթել, որովհետեւ սրտաբաց եւ անկեղծ աղօթքին դիմաց՝ անպայմանօրէն աստուածային ներումը պիտի արդարացնէ մեզ:

Մաֆաւորը արդարացած դուրս եկաւ տանարէն, որովհետեւ մեղաւոր սիրտը բացաւ Աստուծոյ եւ ներում ստացաւ: Իսկ փարիսեցիին փորձեց իր արարքներով հպարտանալ, ինչ որ պատճառ դարձաւ, որ ան նոր մեղքերով ծանրաբեռնուած դուրս գայ տանարէն:

ԳՍԱՍՏԵԱՆ ԿԻՐԱԿԻ

Մեծ Պահոց վեցերորդ Կիրակին կը կոչուի Գալստեան Կիրակի: Արդէն իսկ մօտեցած ենք Մեծ Պահոց վերջին՝ եօթներորդ շաբթուան...

Շարունակելի յաջորդ թիւին:



ԲՈՒ ԽՕՒԲԵՂ ԽՄ ՌՅԲԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս, 119.105)

ԺՁ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 19 ՄԱՐՏ 2023

ԹԻՒ 12

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Ես. 65.8-25: Փլայ. 3.1-4.9: Դուկաս 17.20-18.14:


Ա. ՔԱՌԱՍՆՈՐԴԱՑ. ՏՆՏԵՍԻ ԿԻՐԱԿԻ

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՐԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԴՈՒԿԱՍԻ 17.20-18.14

Յիսուս առակ մը խօսեցաւ իր աշակերտներուն ցոյց տալու համար, թէ պէտք է միշտ աղօթել առանց վիատելու: Եւ ըսաւ. «Քաղաքի մէջ դատաւոր մը կար, որ ոչ Աստուծմէ կը վախնար եւ ոչ ալ մարդոցմէ կ'ամչնար: Նոյն քաղաքին մէջ այրի կին մըն ալ կար, որ իրեն կը դիմէր եւ կը խնդրէր. «Իրաւունքս պաշտպանէ հակառակորդէս»: Դատաւորը երկար ժամանակ մերժեց դատը տեսնել, սակայն ի վերջոյ ըսաւ ինքնիրեն. «Թէեւ Աստուծմէ չեմ վախնար եւ մարդոցմէ չեմ ամչնար, բայց քանի այս այրին նեղութիւն կու տայ ինձի, իր դատը տեսնեմ, որպէսզի մինչեւ վերջ քովս գալով զիս չանհանգստացնէ»: Ապա Տէրը շարունակեց. «Լսեցէ՛ք, թէ ի՛նչ կ'ըսէ անիրաւ դատաւորը: Իսկ Աստուած որքա՞ն պիտի համբերէ իր ընտրեալներուն կրած անիրաւութեան, պիտի չպաշտպանէ՞ զանոնք, որ զիշեր եւ ցերեկ իրեն կը դիմեն: Այո՛, կ'ըսեմ ձեզի, որ անոնց իրաւունքը անմիջապէս պիտի պաշտպանէ: Բայց մարդու Որդին երբ գայ, արդեօք հաւատք պիտի գտնէ՞ երկրի վրայ»:

Այս առակն ալ պատմեց անոնց, որոնք կը պարծենային, թէ արդար են եւ ուրիշները կ'արհամարհէին: «Երկու հոգիներ տաճար գացին աղօթելու. մէկը՝ փարիսեցի, միւսը՝ մաքսաւոր: Փարիսեցին մէկ կողմ կեցած, առանձին կ'աղօթէր. «Աստուած իմ, շնորհակալ եմ քեզմէ, որ ուրիշ մարդոց նման յափշտակող, անիրաւ, շնացող չեմ, կամ այս մաքսաւորին պէս ալ չեմ: Այլ շաբաթը երկու անգամ ծոմ կը պահեմ եւ իմ եկամտոսիս տասանորդը տաճարին կու տամ»: Իսկ մաքսաւորը մէկ կողմ կեցած, աչքերը առանց վեր բարձրացնելու կուրծքը կը ծեծէր եւ կ'ըսէր. «Աստուած, ներէ՛ մեղաւորիս մեղքերը»: Կ'ըսեմ ձեզի, եզրակացուց Յիսուս,- ոչ թէ փարիսեցին, այլ՝ մաքսաւորը արդարացած գնաց տուն, որովհետեւ ով՝ որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի եւ ով՝ որ իր անձը կը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ»:

ՔԱՌԱՍՈՒՆ ՄԱՆԿԱՆՑ ՏՕՆԸ



Երիտասարդները, համարձակախօս եւ անդրդուելի, կը յայտնեն՝ թէ իրենք միշտ եղած են ու կը մնան հաւատարիմ Սերաստիոյ թագաւորին, սակայն ուխտ ունին նաեւ անխախտ պահելու իրենց երկնաւոր թագաւորին նկատմամբ իրենց հաւատքը, որ իրենց համար կենսական է, աղբիւր է յոյսի, խանդավառութեան եւ քաջութեան: Իբրեւ պատիժ այս ընդդիմախօսութեան, քառասուն երիտասարդները կը նետուին սառած լիճի մը մէջ: Նոյն ատեն կը յայտարարուի, թէ եթէ անոնք յանկարծ դարձ գործեն դէպի հին աստուածները, լիճին ափին իրենց տրամադրութեան տակ կայ բաղնիք եւ ջուր:

Քառասուն քաջ երիտասարդները հաւատքի զօրութեամբ կ'որոշեն ընդունիլ իրենց վերապահուած ճակատագիրը: Անոնցմէ մէկը միայն, չղիմանալով այս մահին, կը վազէ սառած ջուրէն դուրս, սակայն տաք ջուրին հազիւ դպած, յանկարծամահ կ'ըլլայ: Մնացած 39-ը կը մնան անդրդուելի: Գիշերով, յանկարծ երկնային լոյս մը կը ճառագայթէ լիճին վրայ ու լուսապսակներ կ'երեւին երիտասարդներուն գլուխներուն վրայ: Պահակներէն մէկը ականատես ըլլալով այս հրաշքին, անմիջապէս դարձի կու գայ ու կը յայտարարէ, թէ ինք կը դառնայ Քրիստոնեայ, անմիջապէս կը նետուի սառած լիճին մէջ ու կ'ընդունի փոխարինել ուրացող քառասուներորդ գինուորը:

Լիբանանի մէջ Ս. Քառասնից Մանկանց անունը կրող եկեղեցի ունինք, որ կը գտնուի Պուրճ Համուտի շրջանին մէջ:

Քառասուն Մանկանց տօնը կը յիշատակուի Կապադովկիոյ Հռովմէական զօրագունդին պատկանող Քառասուն երիտասարդներու նահատակութեան օրը (Մանուկ գրաբար լեզուով երիտասարդ կը նշանակէ եւ ո'չ մեր հասկացողութեամբ երեխայ): Թէեւ հաստատուած է, թէ հաւատքով քրիստոնեայ այս 40 երիտասարդները ինչ ազգութեան կը պատկանին, բայց հայ ժողովուրդը անոնց հաւաքական նահատակութիւնը կը սրբագործէ ու արժանի կը դարձնէ հանդիսաւոր կրօնական տօնախմբութեանց եւ ժողովրդական յիշատակութեան:

Հռովմէական բանակէն ներս խիստ հարցաքննութեան մը ընթացքին կը յայտնաբերուի այս երիտասարդ բանակայիններուն քրիստոնեայ ըլլալը: Մի քանի անգամ կ'առաջարկուի անոնց վերադառնալ հին աստուածներուն, թէ ոչ՝ ենթարկուիլ հաշուեյարդարի:

ԱՍՏՈՒԱԾ ՄԱՐԴՈՒՆ ՓԱՌՔՆ Է

Աստուած մարդը ստեղծեց իր փառքով ու իր փառքին համար (Ես. 43.7): Ինչպէս Աստուած իր փառքը յայտնեց Մովսէսին դէմքին վրայ, այնպէս ալ կ'ուզէ յայտնել մեր դէմքին վրայ: Երբ աղօթի կանգնիք նպատակ ունենալով զԱստուած փառաւորել ու փառաբանել, Աստուած ալ իր կարգին մեզ պիտի փառաւորէ: Ասիկա իր խոստումն է մեզի. «Զիս փառաւորողները պիտի փառաւորեն» (Ա. Թգ. 2.30): Ինչպէս արեւը լուսինին փառքն է, այնպէս ալ Աստուած մարդուն փառքն է: Լուսինը խաւար է առանց արեւին, իսկ մարդը խաւար է առանց Աստուծոյ: Թոյլ չտանք, որ մեղքի ամպը պատնէշ մը դառնայ մեր եւ Աստուծոյ միջեւ, եւ չկարենանք Աստուծոյ փառաւորիչ լոյսը ըմբռնել:

ԱՌԱԿԱՑ (Գ. 23, 19-25)

Որդեա՛կ իմ, լսէ՛ ու իմաստուն եղի՛ր եւ քու սիրտդ դէպի ուղիղ ճամբան շտկէ՛: Մի՛ ընկերանար գինեմոլ ներուն ու իրենց մարմինը մաշող ներուն, վասնպի գինեմոլն ու շուայլը աղբատ կ'ըլլան եւ շատ քունը՝ պատուտած հանդերձ ներ կը հագցնէ:

ԵՐԲ Կ՛ՈՒՉԵՍ ԳԻՏՆԱԿ ԹԷ ԻՆՉՊԷՍ ԱՏՈՒԱԾ ԿԸ ՆԱԿԱՎԵՆԱՍԵՆ ՈՒ ԿԸ ՀՈՎԱՅ ԲՈՒՈՐ ԱՐԱՐԱԾՆԵՐԸ, ԿԱՐԿՎ՝ ՍԱՂՄՈՍ 36

Ամբարիշտին սրտին խորը բոյն դրած մեղքը կը յայտարարէ, թէ իրեն համար Աստուծոյ վախը գոյութիւն չունի: Այդպիսի կեղծ խօսքերով ամբարիշտը ինքզինք կ'օրօրէ, փոխանակ իր անօրէնութիւնը խոստովանելու եւ գայն առելու: Անօրէն եւ ինքզինք խաբող խօսքեր, որոնցմով ան կը լքէ իմաստութիւնը եւ բարի գործերը: Պակած տեղը անօրէնութիւն կը խորհի, բարի փառքն չի հետեւիր, եւ չարէն չի հեռանար: Դո՛ւն է, որ կը հոգաս մարդոց թէ անասուններուն կարիքները, Տէ՛ր: Ի՛նչ թանկագին է հոգածութիւնը, ո՛ր Աստուած բոլոր մարդիկ փութեբունդ հովանիին կ'ապաւինին: Քու տանարիդ առատ օրհնութիւններով կը լիացնես զանոնք, շնորհներու փութեբունդ խմել կու տաս դուն անոնց: Որովհետեւ դո՛ւն ես կեանքի աղբիւրը, լոյսովդ է, որ մեմք լոյսը կը տեսնենք: Մշտական ըրէ հոգածութիւնդ անոնց վրայ՝ որոնք քեզ կը փանջան, եւ արդարութիւնդ անոնց վրայ՝ որոնք սրտով ուղիղ են: Թոյլ մի՛ տար, որ ամբարտաւան մարդիկ ընկնեն զիս, չարագործները յաջողին զիս հալածէ: Հոն՝ պիտի իյնան բոլոր անոնք, որոնք անօրէնութիւն կը գործեն: Պիտի տապալին եւ ա՛լ բնաւ չկանգնին: